ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2014թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼՅՈՒԴՎԻԳ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն հայ ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, աստղաֆիզիկոս Լյուդվիգ Միրզոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աղայան 9 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼՅՈՒԴՎԻԳ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լյուդվիգ Վասիլի Միրզոյանը ծնվել է 1923 թվականի մայիսի 1-ին, Երևան քաղաքում, ծառայողի ընտանիքում։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիլիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, այնուհետև աշխատել է Բյուրականի աստղադիտարանում։

1949 թվականից դասավանդել է Երևանի ռուսական մանկավարժական (ներկայումս՝ Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների) ինստիտուտում։

1951 թվականից Վ. Համբարձումյանի գիտական ղեկավարությամբ Լ. Վ. Միրզոյանը հաջողությամբ պաշտպանել է վաղ սպեկտրալ դասի աստղերի սպեկտրալուսաչափական ուսումնասիրությանը նվիրված ատենախոսական աշխատանքը և ստացել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստճան։

Լյուվիգ Միրզոյանը 1953 թվականին նշանակվել է Բյուրականի աստղադիտարանի գիտական քարտուղար, իսկ 1959 թվականին՝ տնօրենի տեղակալ, այդ պաշտոնում աշխատելով ավելի քան քառորդ դար։ 1965 թվականից նա միաժամանակ ղեկավարել է Բյուրականի աստղադիտարանի աստղերի և միգամածությունների ֆիզիկայի բաժինը, որտեղ նրա անմիջական ղեկավարությամբ կատարվել են երիտասարդ անկայուն աստղերի և աստղային օբյեկտների ուսումնասիրություններ։ Այդ ուսումնասիրությունների արդյունքները ամփոփվել են Լ. Վ. Միրզոյանի ասպիրանտների և աշխատակիցների ատենախոսական աշխատանքներում։ Նույն թվականին սկսվել է նրա խմբագրական գործունեությունը՝ նոր ստեղծված «Աստղաֆիզիկա» համամիութենական պարբերականում, սկզբում որպես գլխավոր խմբագրի տեղակալ, հետագայում՝ գլխավոր խմբագիր։

1950-ական թվականների կեսերից նրա խմբագրությամբ լույս են տեսել բազմաթիվ գիտական մենագրություններ, միջազգային կոնֆերանսների և սիմպոզիումների նյութեր, գիտահանրամատչելի գրքեր։

1968 թվականին Լ. Միրզոյանը Լենինգրադի պետական աստղադիտարանում պաշտպանել է դոկտորական ատենախոսական աշխատանքը՝ նվիրված երիտասարդ աստղերի ֆիզիկային և կինեմատիկային։ Նրան շնորհվել է ֆիզմաթ գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Պրոֆեսոր Լ. Միրզոյանը ԽՍՀՄ ԳԱ աստղագիտական խորհրդի և Աստղագնացության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ էր։

1970-1975 թթ. եղել է Փարիզի աստղաֆիզիկայի ինստիտուտի անդամ-խորհրդական։

1986 թ.-ին Լ. Վ. Միրզոյանը ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1996 թվականին՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս։

Մահացել է 1999թ. հուլիսի 20-ին Երևանում:

Հայ ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, աստղաֆիզիկոս Լյուդվիգ Միրզոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աղայան 9 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի կողմից։

Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը քննարկել է ներկայացված միջնորդությունը և տվել է դրական եզրակացություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼՅՈՒԴՎԻԳ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լյուդվիգ Միրզոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼՅՈՒԴՎԻԳ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լյուդվիգ Միրզոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ